



ԲՆԱՊԱՐԴԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE
ОБЩЕСТВЕННЫЙ ЦЕНТР ЭКОЛОГИЧЕСКОЙ ИНФОРМАЦИИ

Հասցե՝ Չարենց 46

Email: info@aarhus.am

Հեռ.՝ /+37411/ 81 85 93

ՆԵՕԿ_15/07
15_04_2015

**Երևանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին**

Հարգելի պարոն Մարգարյան

Դեռ վաղ գարնանից Երևանում սկսվել են ծառերի էտման աշխատանքները:

Կանաչ գոտիների տնկարկների պահպանությունն ու խնամքը, այդ թվում նաև ծառերի էտման աշխատանքները, կանաչապատման օբյեկտներում անցկացվող միջոցառումների համալիր է, որն իրականացվում է Երևանի քաղաքապետարանի կողմից:

Երևան քաղաքի կլիմայական և էկոլոգիական ոչ բարենպաստ պայմաններում ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքները ունեն կենսական նշանակություն, իգուր չէ որ ժողովուրդն այլ կերպ դրանք անվանում է Երևանի թոքեր: Ուստի խիստ կարևոր է դրանց ճշգրիտ կառավարումը և որոշումների ընդունման ընթացքում շահագրգիռ կողմերի և հանրության կարծիքի դիտարկումը: Որպես կանաչ տարածքների սպառողներ, Երևանի բնակիչները, ելնելով բնակության բարեկեցիկ պայմաններ ունենալու իրենց սահմանադրական իրավունքից կարող են տալ կանաչ տարածքների կառավարման արդյունավետության գնահատականը:

Հարկ է նշել, որ Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող էտման աշխատանքները, մասնավորապես՝ ավելի քան 14000 ծառերի զանգվածային խորը էտը բողոքի լայն ալիք է բարձրացրել երևանցիների շրջանում: Այդ մասին են վկայում սոցիալական ցանցերում ընթացող բուռն քննարկումները, բազմաթիվ հասարակական կազմակերպությունների բացասական արձագանքը, մամուլում և կայքերում տեղ գտած մի շարք հոդվածները և կարծիքները, ինչպես նաև բնակիչների բազմաթիվ այլ միջոցներով բողոքները: Այս ընթացքում հեռախոսազանգեր և նամակներ, բողոքների տեսքով ստացվել են նաև Երևանի Օրհուս կենտրոնում:

Քաղաքացիների հիմնականում դժգոհությունները կայանում են նրանում, որ Երևանի փողոցներում կանաչ զանգվածը մասսայաբար ոչնչացվում է և փոխարենը մնում են անսփոփ տեսքի կոճղեր, որոնք չեն ապահովում իրենց վերապահված հիմնական ֆունկցիան:

Կենտրոնն արձագանքելով ստացված բողոքներին խորհրդակցել է մասնագետների հետ. Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գոհար Օգանեզովայի, Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էլեոնորա Գաբրիելյանի, «Թռչնասերների կենտրոն» ՀԿ-ի նախագահ Միլվա Ադամյանի, կենսաբան Արսեն Գասպարյանի հետ: Պրոֆեսոր Գոհար Օգանեզովան նշեց, որ երբ որ ծառը ենթարկվում է խորը էտի, այսինքն՝ դառնում է ընդամենը կողճ, նա առնվազն երկու տարի չի կատարում իր

հիմնական ֆունկցիան: Պրոֆեսորի խոսքերով ծառը քաղաքային էկոհամակարգում նախ հանդիսանում է թթվածնի աղբյուր, հետո փոշու կլանիչ, այն պետք է ստվեր և գեղեցկություն ապահովի և այս ամենի արդյունքում ծառը պետք է բնական միջավայր ստեղծի: Կարծում ենք ավելորդ է նշելը, որ թվարկած հատկությունները խիստ կենսական և կարևոր են Երևանի համար, հետևաբար երկու տարի այդ թվաքանակով ծառերին զրկել իրենց ֆունկցիայից համարում ենք անընդունելի:

Ծառերի նման խորը էտր քաղաքապետարանի բնապահպանության բաժնի տարածած տեղեկատվության մեջ հիմնավորվում է Երևանում առկա բզեզի մի տեսակի տարածվածությամբ, որը վնասում է ծառերը, մասնավորապես՝ թեղիները: Ինչպես Գոհար Օգանեզովան, այնպես էլ Կենսաբանական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Էլենոորա Գաբրիելյանը, նշեցին, որ որպես այդ բզեզի դեմ պայքարի այլընտրանքային տարբերակ դեռևս 2002թ. Երևանի քաղաքապետարանին առաջարկել են փոխարինել թեղիները այլ տեսակի ծառատեսակներով: Նրանք առաջարկում են երկու թեղու արանքում մեկ այլ տեսակի ծառ տնկել և աստիճանաբար փոխարինել թեղիները: Սակայն քաղաքապետարանը չի արձագանքում իրենց առաջարկներին, փոխարենը մասսայական խորը էտ է իրականացնում: Հարկ է նշել, որ խորը էտի են ենթարկվում ոչ միայն թեղիները, այլ նաև մի շարք այլ ծառատեսակներ, որոնց ընդհանրապես չի սպառնում այդ վնասատուն:

«Թռչնասերների կենտրոն» ՀԿ-ի նախագահ Միլվա Ադամյանը նշեց, որ ծառերի նման էտը ազդում է նաև թռչունների վրա՝ խանգարելով նրանց բնադրմանը, ինչն էլ իր հերթին նպաստում է թռչունների տեսակների պակասեցմանը, այդ թվում՝ նման վնասատուներով սնվող թռչնատեսակների:

Կենսաբան Արսեն Գասպարյանը, չնայած այժմ գիտա-կրթական նպատակով գտնվում է արտերկրում, բայց հետևում է հարցի շուրջ ծավալվող քննարկումներին: Նա նույնպես կտրականապես դեմ է էտման նման եղանակին, ուսումնասիրելով ծառերի էտի օտարերկրյա փորձը՝ նշում է, որ եվրոպական երկրներում նման ձևի՝ զանգվածային խորը էտ չի իրականացվում, որպես օրինակ Գասպարյանը ներկայացրեց Վաշինգտոնի բնական ռեսուրսների բաժնի քաղաքականությունը՝ ուղղված հանրության շրջանում խորը էտի բացասական հետևանքների վերաբերյալ իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումները: Նա բարձրացրեց նաև ազրոկանոնների արդիականության, միջազգային նորմերին համապատասխանության և գիտական հետազոտությունների վրա հիմնված որոշումների ընդունման հարցը:

Ելնելով վերոնշյալից, կարծում ենք, որ հարցը չափազանց կարևոր և մտահոգիչ է և անհապաղ հիմնավոր բացատրությունների, հանրության և մասնագետների կարծիքի հետ հաշվի նստելու կարիք ունի:

Կից գրությամբ ներկայացվում է նաև տվյալ խնդրին առնչվող տեղեկատվության ստացման հարցում:

Հարգանքով՝

Երևանի Օրհուս կենտրոնի
համակարգող



Միլվա Այվազյան